600.0239.07.06.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

7 հունիսի 2017 թվականի №239Ա
ք.Երևան

«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԼԷ №0555 ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ, 33-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 2-ի №339Ն որոշմամբ հաստատված կարգը, կարգի №3 հավելվածը՝ երաշխիքների ներկայացման կարգը, և հաշվի առնելով «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2017 թվականի մայիսի 23-ի հայտը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է**.

1. Երկարաձգել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի օգոստոսի 1-ի «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը Վրաստանի Հանրապետություն էլեկտրական էներգիայի (հզորության) արտահանման լիցենզիա տրամադրելու մասին» №323Ա որոշմամբ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված Վրաստանի էներգահամակարգի վթարային կամ անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած իրավիճակի ժամանակ Վրաստանի Հանրապետություն էլեկտրական էներգիայի (հզորության) արտահանման ԼԷ №0555 լիցենզիայով ամրագրված գործողության ժամկետը՝ որոշման մեջ «մինչև 2017 թվականի հուլիսի 25-ը» բառերը փոխարինելով «մինչև 2018 թվականի հուլիսի 25-ը» բառերով:

2. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել հինգ հարյուր հազար դրամ գումարի նոր երաշխիք՝ մինչև 2018 թվականի օգոստոսի 25-ը գործողության ժամկետով:

3. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հուլիսի 25-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
7 հունիսի 2017թ